

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի

ք. Երևան

12 սեպտեմբերի 2006 թվականի

Նախագահում էր՝

Ա. Մարգարյան - ՀՀ վարչապետ, խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

Վ. Ներսիսյանց - ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական,
խորհրդի նախագահի տեղակալ

Ա. Հակոբյան - ՀՀ վարչապետի խորհրդական

Տ. Դավթյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ

Վ. Մովսիսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

Ա. Գրիգորյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական
տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության պետ,
խորհրդի քարտուղար

Յու. Շուքրյան - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ

Բ. Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն

Գ. Զուգասզյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական
կազմակերպության նախագահ

Կ. Հարությունյան - «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեն

Հ. Խանջյան - «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ

Հրավիրվածներ՝

Ա. Կիրակոսյան - ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ

Մ. Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակա-
յան հետ կապերի վարչության պետ

Գ. Նիկողոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածք-
ների վարչության պետ

Ս. Խանազադյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածք-
ների վարչության գլխավոր մասնագետ

Է. Մանուկյան - «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն

Դ. Սանդուխյան - «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության ծրագրի

համակարգող

- Ա. Բաղդրյան - «Յունիքումփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Հ. Մուսայելյան - «Սինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն
- Ս. Մանուկյան - «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրենի տեղակալ
- Ա. Ալեքսանյան - «Արմինկո» ՍՊԸ համատեղ ձեռնարկության գլխավոր տնօրեն
- Հ. Ավոյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության նախագահ
- Ա. Վարդանյան - «Վիասֆեր Տեխնոպարկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Կ. Վարդանյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն
- Ի. Կուլոգիաննիս - «ԱրմենՏել» ՀՀ ՓԲԸ-ի ինֆորմացիոն տեխնոլոգիաների գլխավոր տնօրեն
- Լ. Ավանեսյան - «ԱրմենՏել» ՀՀ ՓԲԸ-ի գործադիր օգնական
- Ա. Մայիլյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ
- Ժ. Ազիզյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետի տեղակալ
- Ա. Մելքոնյան - «CAPS» ծրագրի փոխտնօրեն
- Ա. Քուչուկյան - «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ
- Գ. Բարսեղյան - «Մայքրոսոֆթ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն
- Ա. Մելիքյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի իրավաբան
- Գ. Բալոյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի կապի վարչության պետ
- Լ. Բարոյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տեսչական և լիցենզավորման բաժնի պետ
- Ա. Սարգսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Ա. Մկրտչյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության

առաջատար մասնագետ

Դ. Հայրապետյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության
առաջատար մասնագետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

Ա. Գրիգորյան

Ա. Հակոբյան

Դ. Սանդուխչյան

2. 2006 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կազմակերպվող «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների մասին տեղեկատվության ներկայացում

Ա. Հակոբյան

Տ. Դավթյան

Բ. Ենգիբարյան

Կ. Վարդանյան

3. Հայաստանի Հանրապետությունում ռադիոհաճախականությունների բնագավառում ՏՏ-ի զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների մասին

Դ. Սանդուխչյան

Բ. Ենգիբարյան

Ա. Մելիքյան

4. Այլ հարցեր

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան, Ա. Հակոբյան, Տ. Դավթյան, Բ. Ենգիբարյան, Ա. Բալդրյան, Դ. Սանդուխչյան, Հ. Խանջյան, Ժ. Ազիզյան, Գ. Նիկողոսյան, Գ. Չուգասզյան, Ա. Մարգարյան)

ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանին և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝ մինչև խորհրդի հաջորդ նիստը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ հստակեցնել ՏՀՏ բաղադրիչ պարունակող վարկային և (կամ) դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև համապատասխան որոշումներով ստեղծված կամ վերանշյալ ծրագրերի շրջանակներում գործող կազմակերպությունների վերաբերյալ պետական կառավարման մարմիններից ստացված ամփոփ տեղեկատվությունը և այդ տեղեկատվության ուսումնասիրության արդյունքները ներկայացնել խորհրդի առաջիկա նիստին:

2. 2006 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կազմակերպվող «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների մասին տեղեկատվության ներկայացում

(Ա. Գրիգորյան, Ա. Հակոբյան, Տ. Դավթյան, Բ. Ենգիբարյան, Գ. Չուգասզյան,
Ա. Վարդանյան, Է. Մանուկյան, Կ. Վարդանյան, Ա. Մարգարյան)

1. Ընդունել ի գիտություն 2006 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կազմակերպվող «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումները համակարգող հանձնաժողովի կողմից մշակված միջոցառումների ծրագիրը:

2. 2006 թվականի նոյեմբերի վերջին հրավիրել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի հերթական նիստ՝ նիստի օրակարգում ընդգրկելով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների արդյունքների մասին հարցը:

3. Հայաստանի Հանրապետությունում ռադիոհաճախականությունների բնագավառում
ՏՏ-ի զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների մասին

(Ա. Գրիգորյան, Դ. Սանդուխյան, Ա. Հակոբյան, Տ. Դավթյան, Բ. Ենգիբարյան, Գ. Չուգասզյան,
Ա. Մարգարյան)

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Տ. Դավթյանին, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանին և «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության ծրագրի համակարգող Դ. Սանդուխյանին՝ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել Հայաստանի

Հանրապետությունում ռադիոհաճախականությունների տիրույթների տրամադրման հետ կապված հարցերի վերաբերյալ հստակ առաջարկություններ:

4. Այլ հարցեր

(Ա. Գրիգորյան, Շ. Խանջյան, Ա. Հակոբյան, Ա. Մարգարյան)

1. Ընդունել ի գիտություն ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը «Մայքրոսոֆթ» ընկերության պատվերով «Բի Լայն» ՍՊԸ-ի կողմից իրականացված «MICROSOFT WINDOWS XP» օպերացիոն համակարգի տերմինալանցանկի հայերենացման մասին:

2. Հավանություն տալ «MICROSOFT WINDOWS XP» օպերացիոն համակարգի հայերենացված տերմինալանցանկին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Մարգարյան

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Գրիգորյան